XXIII

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (XXIII Դ.)

Քննության ենթակա ժամանակագրությունը կազմված է Ս. Անեցու ժամանակագրության օրինակով, բայց ունի բավական ընդարձակ խորագիր. «Մասնաւոր ժամանակագրութիւն և գաւազանագիրք սկսեալ ի թուականութեան մարմնառիկ անօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հազարորդի ինն յոբելի և երիւք թուովք աւելի, իսկ արամեանս տօմարի եռից երրակ հարիւրի և անդուսա հաւաքեալ և վիպաքանեալ մինչև նարդեանս ամանակի, որում զպիրս դրեցի և առ ապա եղելոցն ապառնի...»։

Ժամանակագրական աղյուսակը սկսվում է XV դարի կեսից, թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավման հիշատակությամբ, վերջանում է 1734 թ. Աբրահամ Բ. Խոշաբեցու մահվան և վերջինիս հաջորդ Աբրահամ Գ. Կրետացու կաթողիկոս օծվելու վկայությամբ, ընդգրկելով 280 տարվա անցուդարձ։

Եթե նկատի ունենանք հեղինակի խոստումը թե «... անդուստ (1453 թ.— Վ. Հ.) հավաքեալ և վիպաքանեալ մինչև նարդեանս ամանակի, որում զպիրս դրեցի...» մի կողմից և ժամանակագրության վերջին եզրը՝ 1734 թվականը մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ հեղինակն իր կազմած ժամանակագրության վերջին դեպքերին եղել է ժամանակակից, ուրեմն նա XVIII դարի առաջին կեսի անձնավորություն է։ Ժամանակագրության աղբյուրները որոշակի մատնացույց անել հնարավոր չէ։ Կան մի շարք վկայություններ, որոնք գտնում ենք Սամվել Անեցու ժամանակագրության շարունակության մեջ, սակայն այդ չի նշանակում, թե առաջարկվող ժամանակագրության հեղինակը աշակերտել է Ս. Անեցու ժամանակագրության շարունակողին. ընդհակառակը, երկու բնագրերի համապատասխան վկայությունները ծավալի և մանրամասնությունների մեջ շեղվում են իրարից. այդ կարելի է ցույց տալ մի քանի օրինակով.

Սամ. Անեցի ժամանակագրություն	XXIII ժամանակագրություն
1. էջ 175. «ՋԲ սուլտան Մահմատն էառ զՍտամբոլ ի Մանուէլ թագաւորէ Յունացն»։	1. «ՌՆԾԵ(ՋԲ) զԿոստանդինուպոլիս էառ սուլթան Մահմատն և անտ հաստատեաց զթոռ թագաւորութեանն։ Եւ էր թագաւոր Յունաց վերջին Կոստանդին, որ սպանաւ ի նմին»։
2. էջ 177. «ՌԿԳ Առաջին Շահ Սպան զաջ Լուսաւորչին, և զքարերն Ս. Էջմիածնի տարաւ ի Սպահան»։	2. ՌՈԾԵ (ՌԿԲ) զՄելիքսեթ կաթողիկոսն չարչարեցին և Հ քար նշանաւոր սուրբ Էջմիածնի և զաջ Լուսաւորչին տարան ի Սպահան հրամանաւ շահ Առասին»։

Նման օրինակները կարելի է շարունակել։

Ժամանակագրության մեջ արձանագրված դեպքերին զուգընթաց հանդի-

պում ենք ժամանակի կաթողիկոսների աթոռակալության տարիների վկայություններին։ Սրանք սկսվում են Գրիգոր Մակուեցի Ջալալբեկյանի աթոռակից Արիստակեսի 1455 թվականին կաթողիկոս դառնալու և վերջանում 1734 թվականին Աբրահամ Կրետացու կաթողիկոս օծվելու վկայությամբ։ Ընդհանուր առմամբ համապատասխանելով Ա. Դավրիժեցու[1] բերած և № 1721 ժողովածուի մեջ գտնվող կաթողիկոսների գահակալության վերաբերող ժամանակագրության[2] վկայություններին, ինչպես և Օրմանյանի հաշվումներին՝ հանգես է գալիս որպես արժանահավատ աղբյուր, թեև աղբյուրագիտական տեսակետից առանձին նորություն չի ներկայացնում այս բնագավառում։

Առաջարկվող ժամանակագրության վկայությունները չեն սահմանափակվում Հայաստանին վերաբերող տեղեկություններով, ընդհակառակը սրա հետ մեկտեղ գտնում ենք նաև բազմաթիվ վկայություններ, որոնք վերաբերում են՝ օսմանական սուլթանների և պարսկական շահերի գահակալություններին, սրանց վարած պատերազմներին, ասպատակություններին, պալատական ինտրիգներին, Եվրոպայի առանձին երկրներին և այլն։

Ժամանակագրության բազմաթիվ վկայությունները հաստատվում են ուրիշ սկզբնաղբյուրների կողմից, որոնք ցույց կտանք բնագրին առընթեր ծանոթագրություններում։

Ընդհանուր առմամբ ժամանակագրության վկայությունները արժանահավատ են, սակայն կան նաև այնպիսի վկայություններ, որոնք մի փոքր շեղվում են կատարված դեպքերի ստույգ ժամանակից, ասենք Ամերիկայի գյուտի, 1679 թ. Երևանում և այլուր տեղի ունեցած երկրաշարժի, Հակոբ Ջուղայեցու մահվան վկայությունները և այլն։

---

[1] «Պատմութիւն Ա. վարդապետի Դաւրիժեցւոյ», էջ 432—440։

[2] Էջ 134ա—136բ։

[3] «Աղդապատում», էջ 2145—2883։ Հմմտ. նաև Շահխաթունեանց «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինդ դաւառացն Արարատայ» 1842 թ., հատոր Ա, 211—226։ Վերջինիս առանձին վկայությունների համեմատությամբ ժամանակագրությունը տալիս է որոշ շեղումներ։

XXIII

Մասնաւոր ժամանակագրութիւն և զաւազանագիրք, սկսեալ ի Թուականութեան մարմնաւորին անօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հազարորդի ինն յորելի և երիւք Թուովք աւելի. իսկ արամեանս տօմարի եոից երրակ հարիւրի և անդուստ հաւաքեալ և վիպաքանեալ մինչև նարդեանս ամանակի, որում զգիրս գրեցի և առապա եղելոցն ապառնի, աշխատասիրութեամբ ումեմն չարժանի յիշելոյ, քան զի վաթթար եմ զործովք քան զամենայն հողի և ժտեմ հանդիպողաց այսմ դիւգնաքեայ բանի յիշել զմեզ միով ողորմիայիւ 45ա

Թուականք		
ի Փրկչա-[illegible]	Կաթողի-կոսք	Հայոց
ՌՆԾԳ		Ջ
ՌՆԾԳ		ՋԱ
ՌՆԾԵ		ՋԲ
ՌՆԾԶ		ՋԳ
ՌՆԾԷ	Տէր Արիս-տակէս	ՋԳ
ՌՆԾԸ	Զ	ՋԵ
ՌՆԾԹ		ՋԶ
ՌՆԿ		ՋԷ
ՌՆԿԱ		ՋԸ
ՌՆԿԲ		ՋԹ
ՌՆԿԳ	Տէր Զա-քարիայ	ՋԺ
ՌՆԿԳ	Աղթա-մարցի Է	ՋԺԱ
ՌՆԿԵ		ՋԺԲ
ՌՆԿԶ		ՋԺԳ
ՌՆԿԷ		ՋԺԳ
ՌՆԿԸ	Տէր Սար-գիս Ը	ՋԺԵ
ՌՆԿԹ		ՋԺԶ
ՌՆՀ		ՋԺԷ
ՌՆՀԱ		ՋԺԸ
ՌՆՀԲ		ՋԺԹ
ՌՆՀԳ	Տէր Աբրա-համ	ՋԻ

—Ճհանշէն որդի Ղարայ Ուսուֆին գնացեալ էառ զՀամատան, զՍաւայ, զԱսպահան, զՌէյ, զՂազվին, զԳիլան, զՔաշան, զՇիրազ, զՔրման և զԽորասան և զքաղաքս անթիւ բազումս։

—ԶԿոստանդնուպօլիս էառ[1] սուլթան Մահմատն և անտ հաստատեաց զաթոռ թագաւորութեանն. և էր թագաւոր յունաց վերջին Կոստանդին, որ սպանաւ ի նմին։[2]

—Զիթարն զՏրապիզոն էառ։[3]

—Զաջ սուրբ Լուսաւորչին տարաւ տէր Զաքա[ր]այն ի Աղթամար կղզին.

—Պարոնլոյսն նահատակեցին ի Կաֆայ։[4]

	Ի Փրկչ[illegible]		Հայոց	
	ՌՆՀԴ		ՋԻԱ	
	ՌՆՀԵ		ՋԻԲ	
	ՌՆՀԶ	Տէր Յօհաննէս Բ	ՋԻԳ	
	ՌՆՀԷ		ՋԻԴ	—Զհափայ առին Տաճիկք ի ֆռանկաց։[5]
	ՌՆՀԸ	միւս Տէր Սարգիս	ՋԻԵ	—ԶԳողգոթա առին Վրացիք ի հայոց։[6]
	ՌՆՀԹ	ԺԷ	ՋԻԶ	—Աջ սուրբ Լուսաւորչին բերաւ Յաղթամարայ ի սուրբ էջմիածին ձեռամբ Վրդանէս եպիսկոպոսին։
	ՌՆՁ		ՋԻԷ	
	ՌՆՁԱ		ՋԻԸ	
	ՌՆՁԲ		ՋԻԹ	
	ՌՆՁԳ		ՋԼ	
	ՌՆՁԴ		ՋԼԱ	—Օսմանցի Պայազիտն թագաւորեաց ամս ԼԱ (31)։
	ՌՆՁԵ		ՋԼԲ	
	ՌՆՁԶ		ՋԼԳ	
	ՌՆՁԷ		ՋԼԳ	
	ՌՆՁԸ		ՋԼԵ	
	ՌՆՁԹ		ՋԼԶ	
	ՌՆՂ		ՋԼԷ	
	ՌՆՂԱ		ՋԼԸ	
	ՌՆՂԲ		ՋԼԹ	
	ՌՆՂԳ		ՋԽ	—Սկիզբն թագաւորութեան Ղզլպաշին։[7]
	ՌՆՂԳ		ՋԽԱ	—Շահ Իսմայիլն, որդի շխ հայաարին, քեռորդի Ծաղուր փաղշային, թագաւորեաց ամս ԼԳ (34)[8]
	ՌՆՂԵ	Տէր Արիստակէս Զ	ՋԽԲ	
	ՌՆՂԶ		ՋԽԳ	
—Ամերիգայ, որ է Նոր աշխարհ, գտեալ եղև յիտալացի Քրիստափորոս Գօլօմպունի արեգայէ։ Յետոյ Փլորէնցացի Ամերիգոս եղիտ զմասունս նորա և Ամերգայ կոչեցաւ ըստ անուան նորա։[9]	ՌՆՂԷ		ՋԽԳ	
	ՌՆՂԸ	Տէր Սարգիս	ՋԽԵ	—Յազդէն Նետողացն Ռստամ փաղշահն տիրէր Վասպուրականաց։
	ՌՆՂԹ		ՋԽԶ	
	ՌՇ		ՋԽԷ	
	ՌՇԱ	Տէր Թադէոս Ե	ՋԽԸ	

	Ի Փրկու-թեան		Հայոց	
—Շահ Իսմայիլն եկն և զԱլվանան էառ։[10]	ՌՇԲ		ՋԽԹ	
	ՌՇԳ		ՋԾ	
	ՌՇԴ		ՋԾԱ	
	ՌՇԵ		ՋԾԲ	
	ՌՇԶ	Տէր Եղիշէ Բ	ՋԾԳ	
	ՌՇԷ		ՋԾԴ	
	ՌՇԸ	Տէր Ներսէս Թ	ՋԾԵ	
	ՌՇԹ		ՋԾԶ	
	ՌՇԺ		ՋԾԷ	
	ՌՇԺԱ		ՋԾԸ	
	ՌՇԺԲ		ՋԾԹ	
	ՌՇԺԳ		ՋԿ	
	ՌՇԺԴ		ՋԿԱ	—Մեռաւ սուլթան Պայազիտն և թագաւորեաց որդի նորա սուլթան Սէլիմն, ամս Թ (9)։
	ՌՇԺԵ		ՋԿԲ	
	ՌՇԺԶ		ՋԿԳ	
	ՌՇԺԷ	Տէր Զաքարիայ Ե	ՋԿԴ	—Սուլթան Սելիմն ել ի վերայ Սօֆուն և էառ զնա, որ ասի Չալտրանայ կռիւն, ընդ շահ Իսմայելին։[11] Սոյն թագաւորս էառ զԿամխայ բերդն և զԱմիթ, զՄսր և զՇամ, և արար տղայ ժողով ի քրիստոնէից։
	ՌՇԺԸ		ՋԿԵ	
	ՌՇԺԹ		ՋԿԶ	
	ՌՇԻ		ՋԿԷ	
	ՌՇԻԱ		ՋԿԸ	
	ՌՇԻԲ	Տէր Սարգիս ԺԶ	ՋԿԹ	
	ՌՇԻԳ		ՋՀ	—Մեռաւ սուլթան Սէլիմն և թագաւորեաց որդի նորա սուլթան Սուլէյման ամս ԻԵ (25)։[12]
	ՌՇԻԴ		ՋՀԱ	
	ՌՇԻԵ		ՋՀԲ	
—Հռոմոց թագաւորն՝ եկն և շահ Իսմայելն փախեաւ։	ՌՇԻԶ		ՋՀԳ	
	ՌՇԻԷ		ՋՀԴ	
—Շահ Թահմազն թագաւորեաց ամս ԾԱ (51)։[13]	ՌՇԻԸ		ՋՀԵ	—Սուլէյմանն էառ զՊուատում թախտն Ընկռուզաց։[14]
	ՌՇԻԹ		ՋՀԶ	

Ի Քրիս-տոսէ		Հայոց	
ՌՇԼ		ՋՀԷ	
ՌՇԼԱ		ՋՀԸ	
ՌՇԼԲ		ՋՀԹ	
ՌՇԼԳ		ՋՋ	—Սկիզբն եղև տղայ ժողովելոյ։
ՌՇԼԴ		ՋՋԱ	
ՌՇԼԵ		ՋՋԲ	—Սուլթան Սուլէյմանն բազում զօրօք գնաց ի վերայ Պարսից և նա փախեաւ ի Խորասան, և ինքն եկեալ ի Բաղդատ ձմերեաց և էառ զնա, և զարունն գնաց ի տեղի իւր։[15]
ՌՇԼԶ		ՋՋԳ	
ՌՇԼԷ		ՋՋԴ	
ՌՇԼԸ	Տէր Գրի-գոր Ե	ՋՋԵ	
ՌՇԼԹ		ՋՋԶ	—Սա եսպան զԻբրահիմ փաշայն, որ եղև պատճառ տղայ ժողովելոյ։
ՌՇԽ		ՋՋԷ	
ՌՇԽԱ		ՋՋԸ	
ՌՇԽԲ		ՋՋԹ	
ՌՇԽԳ	Տէր Ստե-փաննոս Սալմաս-տեցի ԺԶ	ՋՂ	—Սուլթան Մուստաֆան յԱմասիայ եկն և թագաւորեաց ի նմա ամս ԺԳ (13) և սպանաւ ի հօրէն։
ՌՇԽԳ		ՋՂԱ	
ՌՇԽԵ		ՋՂԲ	—Թօխաթու Ը (8) եկեղեցին ի միասին քակեցին այլազգիքն յապրիլի Թ (9)։[16]
ՌՇԽԶ		ՋՂԳ	
ՌՇԽԷ		ՋՂԴ	—Դէրջնցի Մաղաքիայ վարդապետն գնաց առ թագաւորն Սուլէյման և խափանեաց զտղայ ժողովելն։
ՌՇԽԸ		ՋՂԵ	
ՌՇԽԹ		ՋՂԶ	
ՌՇԾ		ՋՂԷ	—Շահին եղբայր՝ Ալխասն, եկեալ հնազանդեցաւ խոնթքարին և միւս տարին խոնթքարն գնաց ի վերա շահին։[17]
ՌՇԾԱ		ՋՂԸ	
ՌՇԾԲ		ՋՂԹ	
ՌՇԾԳ		Ռ	
ՌՇԾԳ		ՌԱ	
ՌՇԾԵ		ՌԲ	
ՌՇԾԶ		ՌԳ	—Սուլթան Սուլէյմանն գնաց ի վերայ Պարսից՝ և զՃրեան և զՆախչևան գերեալ տարան։[18]
ՌՇԾԷ		ՌԳ	

	Ի Քրիստոսէ		Հայոց	
	ՌՇԾԸ		ՌԵ	
	ՌՇԾԹ	Տէր Միքա-յէլ Ը	ՌԶ	
	ՌՇԿ		ՌԷ	—Սուլթան Պայազիտն հկն յԱմասիայ։
	ՌՇԿԱ		ՌԸ	—Դարձեալ գնաց ի Կօնիայ ի վերայ եղբօրն և յաղթեցաւ ի նմանէ և փախստական գնաց ի Ղզլպաշն և անտ մեռաւ հրամանաւ հօրն իւրոյ՝ սուլթան Սուլէյմանին։
	ՌՇԿԲ		ՌԹ	
	ՌՇԿԳ		ՌԺ	
	ՌՇԿԴ		ՌԺԱ	
	ՌՇԿԵ		ՌԺԲ	
	ՌՇԿԶ		ՌԺԳ	
	ՌՇԿԷ		ՌԺԴ	
	ՌՇԿԸ	Տէր Բար-սէղ Զ	ՌԺԵ	
	ՌՇԿԹ		ՌԺԶ	
	ՌՇՀ		ՌԺԷ	
	ՌՇՀԱ		ՌԺԸ	
	ՌՇՀԲ		ՌԺԹ	
	ՌՇՀԳ		ՌԻ	
	ՌՇՀԴ	Տէր Գրի-գոր Գ	ՌԻԱ	
	ՌՇՀԵ		ՌԻԲ	
	ՌՇՀԶ		ՌԻԳ	—Զկիպրոս էառ սուլթան Սէլիմ։[19]
	ՌՇՀԷ	Տէր Ստե-փաննոս Առնձի Բ	ՌԻԴ	—Մեռաւ սուլթան Սէլիմ. և թագաւորեաց որդի նորա սուլթան Մուրատն, ամս Ի (20)։
	ՌՇՀԸ		ՌԻԵ	
—Շահ Թահմազն ի բաղնիսն խեղդեցին[20] և զՍիմայէլն եդին թագաւոր և նա եսպան զիւր է (7) եղբարսն և իշխանքն սպանին զՍիմայէլն և եդին զմիւս եղբայր նորա՝ զԽուտապանտան շէխ գոլով թագաւոր և զաչացու, որ թագաւորեաց ամս Ե (5)	ՌՇՀԹ	Տէր Թա-դէոս Բ	ՌԻԶ	—Սա էառ զՇրուան և զմիւս տարին զԴամուր-Ղափուն։[21]
	ՌՇՁ		ՌԻԷ	
	ՌՇՁԱ	Տէր Առա-քել Է	ՌԻԸ	—Մեծ շահ Աբասն թագաւորեաց ամս Ծ (50)։[22]
	ՌՇՁԲ		ՌԻԹ	
	ՌՇՁԳ		ՌԼ	
	ՌՇՁԴ			
	ՌՇՁԵ		ՌԼԱ	
	ՌՇՁԶ		ՌԼԲ	

—Ի փրկչական թվականին ՌՇՁԲ (1582) վեհապետ փափն Հռոմայ Գրիգորիոս ԺԳ (13)-րդ, էր հմուտ աստղաբաշխութեանս, բարձ մոգով և քննութիւն և ուղղեաց զամարն զարնանամաքն այսպէս. քանզի աարին ունի ՅԿԵ (305) աւուրս, և Զ (6) ժամս, բայց ոչ կատարեալ Զ (6) ժամս, այլ պակաս բոպէիւք ինչ և առաջինքն ի Դ (4) տարին Զ. Զ. (6. 6.) ժամս կատարեալ կարծելով զմի օրն ի մուտն մարտի ի քաց ձգէին. որ օրն այն էր վերջին օր փետրվարի ԻԹ (29) և կոչէին զայն առաջի օրն մարաի, զաՅն զայն և կոչէին ամ նահանջի։ Իսկ նահանջի օրն այն ոչ էր կատարեալ ԻԴ (24) ժամ, այլ բոպէիւք ինչ պակաս, և այնպէս պակաս ի դուրս ձգելով ի Նիկեայ ժողովոյն մինչև ի Գրիգորոսի ՌՇՁԲ (1582) թՎ. զարնանմուտն Ժ (10) օր յետ էր Յեացեալ և արեկագն ի խոյն չմտած Ժ (10) օր յառաջ զայր և ծոէր զզատիկն։ Վասն որոյ զԺ (10) օրն ի յետ ձգել կանոնեաց. զի յորժամ հին ամարն յունվարի Ա (1) լինի, նոցա նորն՝ ԺԱ (11)՝ լինի և մարտի Ժ (10)՝ Ի (20) լինի նոցա և զարնանմուտն ուղիղ ըստ տոմարական և աստղաբաշխական արհեստին ուղեցին զզատիկն։[34]

—Շահ Ապաս եկն հատպէյճան և զՀայոց ազգն քշեց Իսպահան, զՆերսեն և զՆախչևան և զՋուղայ և զայլ կողմանսն՝ յԱլաշկերտաւ ի Լոյայ և տարաւ ի Գիլան և յԱպահան և տիրեաց Ատրպատականս ի Թարվզու մինչև յԵրևան մինչ ի Գանձայ և ի Շրուան, Շամախի։

Ի Գրիգորեանոց		Հայոց
ՌՇՁԷ		ՌԼԳ
ՌՇՁԸ		ՌԼԴ
ՌՇՁԹ	Տէր Դաւիթ Ե	ՌԼԵ
ՌՇՂ		ՌԼԶ
ՌՇՂԱ		ՌԼԷ
ՌՇՂԲ		ՌԼԸ
ՌՇՂԳ		ՌԼԹ
ՌՇՂԴ		ՌԽ
ՌՇՂԵ		ՌԽԱ
ՌՇՂԶ	Տէր Մելքիսէք Ժ	ՌԽԲ
ՌՇՂԷ		ՌԽԳ
ՌՇՂԸ		ՌԽԴ
ՌՇՂԹ		ՌԽԵ
ՌՈ		ՌԽԶ
ՌՈԱ		ՌԽԷ
ՌՈԲ		ՌԽԸ
ՌՈԳ		ՌԽԹ
ՌՈԴ		ՌԾ
ՌՈԵ		ՌԾԱ
ՌՈԶ	Տէր Սրապիոն Բ	ՌԾԲ
ՌՈԷ		ՌԾԳ
ՌՈԸ		ՌԾԴ
ՌՈԹ		ՌԾԵ
ՌՈԺ	Նոյն Տէր Մելքիսէք և Դաւիթ ԺԹ	ՌԾԶ
ՌՈԺԱ		ՌԾԷ
ՌՈԺԲ		ՌԾԸ
ՌՈԺԳ		ՌԾԹ
ՌՈԺԴ		ՌԿ

—Զերևան առին և զերեցին. և նոր բերդ շինեցին, որ այժմ կայ հաստատուն։

—Օսման փաշայն դիմարվեղ էառ և զՇրուան և Շամախի։[35]

—Իսկ Ֆահրատ փաշայն էառ Գանձայ և զտմենայն սահմանս նորայ։[36]

– Մահմատ սուլթան թագաւորեաց ամս Ժ (10)։

—Սրապիոն վարդապետն Ուրհայեցի եղին կաթողիկոս ի սուրբ էջմիածին և անուանեցին Գրիգորիս։[3]

—Զդալ օղլի սալտարն եկեալ յաղթեցաւ ի շահ Ապասէն և դարձաւ։

	Ի Փրկչական		Հայոց	
	ՌՈԺԴ		ՌԿԱ	
— Զոէր Անդրէաս քահանայն նահատակին յԱգուլիս և եդին ի Խցաձորու եկեղեցին։[30]	ՌՈԺԵ		ՌԿԲ	— ԶՄելքիսէթ կաթողիկոսն չարչարեցին և Ը (8) քար նշանավոր սուրբ Էջմիածնի և զաջ Լուսաւորչին տարան Իսպահան հրամանաւ շահ Ապասին։[29]
	ՌՈԺԶ		ՌԿԳ	
	ՌՈԺԷ		ՌԿԴ	
	ՌՈԺԸ		ՌԿԵ	
	ՌՈԺԹ		ՌԿԶ	— Թագաւորեաց սուլթան Մուսաաֆայն Գ (3) ամիս և ընկեցին զնա. եդին թագաւոր զՕսմանն, ամս Դ (4)։
	ՌՈԻ		ՌԿԷ	
	ՌՈԻԱ		ՌԿԸ	
	ՌՈԻԲ		ՌԿԹ	
	ՌՈԻԳ		ՌՀ	— Ենկիչէրիքն սպանին զՕսմանն և կրկին թագաւորեցուցին զՄուսաաֆայն տարի և կէս։
	ՌՈԻԴ		ՌՀԱ	
— Շահ Աբաս զՂանդահար էառ, տնուի գործաւ. զԲաղդատ էառ։	ՌՈԻԵ		ՌՀԲ	
	ՌՈԻԶ	Տէր Իսահակ Ե	ՌՀԳ	— Եւ զնա վերացուցեալ եդին զՕսմանի որդին՝ զՄուրատն թագաւոր, ամս ԺԹ (19)։
	ՌՈԻԷ		ՌՀԴ	
	ՌՈԻԸ		ՌՀԵ	
	ՌՈԻԹ		ՌՀԶ	
	ՌՈԼ		ՌՀԷ	
	ՌՈԼԱ	Տէր Մովսէս Գ	ՌՀԸ	— Մովսէս Սիւնեաց նստաւ կաթողիկոս ի սուրբ Էջմիածին. և նորոգեաց զսուրբ Կաթուղիկէն և պարսպեաց շուրջանակի և արար բազում ուղղութիւն։
	ՌՈԼԲ		ՌՀԹ	
	ՌՈԼԳ		ՌՁ	
	ՌՈԼԴ		ՌՁԱ	
	ՌՈԼԵ	Տէր Փիլիպպոս ԻԲ	ՌՁԲ	— Փիլիպպոս Հաղբակցին նստաւ կաթողիկոս և յաւել ի նորոգութիւն և ի բարեձևութիւն կրկնապատիկ քան զՄովսէս կաթողիկոսն։ Սա դարձոյց զաջ սուրբ Լուսաւորչին Իսպահանայ ի սուրբ Էջմիածին։
	ՌՈԼԶ		ՌՁԳ	
	ՌՈԼԷ		ՌՁԴ	— Սուլթան Մուրատն եկեալ էառ զԵրևան և գնացեալ ի Թարվէզ. ի նոյն ամի ի դարձ նորին եկն շահ Սէֆին յետ էառ զԵրևան։[31]
	ՌՈԼԸ		ՌՁԵ	
	ՌՈԼԹ		ՌՁԶ	
	ՌՈԽ		ՌՁԷ	
	ՌՈԽԱ		ՌՁԸ	— Ի նոյն թվին սուլթան Մուրատն էառ զԲաղդատ և գնացեալ ի Ստամպօլ մեռաւ։[32]

Ի Գրիգոր		Հայոց	
ՌՈԽԲ		ՌԶԹ	—Ցայսմ ամի հաշտութիւն եղե ի մէջ Բ (2)-ց թագաւորաց և թագաւորեաց եղբայր նորա սուլթան Իբրահիմն։[33]
ՌՈԽԳ		ՌՂ	
ՌՈԽԴ		ՌՂԱ	—Շարժ եղե ի Թարվէզ և ի Թուխուրկան ՌԲՃ (1200) մարդ աւելի մեռան։
ՌՈԽԵ		ՌՂԲ	
ՌՈԽԶ		ՌՂԳ	
ՌՈԽԷ		ՌՂԴ	—Օսմանցիք խաբէութեամբ զԿրիտն առին բերդ մի և Լ (30) ամ պատերազմեալ զրովանդակն առին ի վէնէտկցւոյն։[35]
ՌՈԽԸ		ՌՂԵ	
ՌՈԽԹ		ՌՂԶ	
ՌՈՄ		ՌՂԷ	—Զսուլթան Իբրահիմն խեզդամահ արարեալ, զորդին իւր Մահմէտ թագաւորեցուցին, որ իշխեաց ամս Խ (40)։[36]
ՌՈՄԱ		ՌՂԸ	
ՌՈՄԲ		ՌՂԹ	
ՌՈՄԳ		ՌԺ	—Փիլիպպոս հոգևոր տէրն գնաց ի սուրբ Յերուսաղէմ։ Զսուրբ Յակոբայ մէջն սալ կապ արար և գնացեալ ի Սամպոլ։ Դարձաւ յաթոռն ի սուրբ էջմիածին և հիմն արկեալ զտնկատունն վաղհանեցաւ։
ՌՈՄԴ		ՌԺԱ	
ՌՈՄԵ		ՌԺԲ	
ՌՈՄԶ		ՌԺԳ	— Արեգակն խաւարեցաւ։
ՌՈՄԷ	Տէր Յակոբ Իէ	ՌԺԴ	—Յակոբ վարդապետն Զուղայեցի նստաւ կաթողիկոս ի սուրբ էջմիածին և կատարեաց զանկատունն և երեր զքահրէզն բազում ծախիւք։
ՌՈՄԸ		ՌԺԵ	
ՌՈՄԹ		ՌԺԶ	
ՌՈԿ		ՌԺԷ	
ՌՈԿԱ		ՌԺԸ	—Տաթևու մեծ անապատն շարժեցաւ ի տեղոջէն Բ (2) վտանանաւ։[37] յետոյ Յակոբ հոգևոր տէրն բերեալ զմիաբանսն ի ներքոյ Տաթևու. և անդ հիմնարկեաց զանապատն և զեկեղեցին և աւարտեաց զայն Արիստակէս վարդապետն։[38]
ՌՈԿԲ		ՌԺԹ	
ՌՈԿԳ		ՌԺԺ	
ՌՈԿԴ		ՌԺԺԱ	
		ՌԺԺԲ	
		ՌԺԺԳ	
ՌՈԿԵ		ՌԺԺԴ	
ՌՈԿԶ		ՌԺԺԵ	—Շահ Ապասն յԱշրաֆ մեռաւ և եղին թագաւոր զշահ Սէֆին և յետոյ փոխեալ զանունն, շահ Սուլէյման կոչեցին։[40]
ՌՈԿԷ		ՌԺԺԶ	

—Մակուայ բերդն քակեցին։

—Մեռաւ ի Փաշան շահ Սէֆին և թագաւորեաց որդի նորա երկրորդ շահ Ապասն ամս ԻԴ (24)։[34]

—Փիլիպպոս հոգևոր տէրն գնաց ի սուրբ Յերուսաղէմ։ Զսուրբ Յակոբայ մէջն սալ կապ արար և գնացեալ ի Սամպոլ։ Դարձաւ յաթոռն ի սուրբ էջմիածին և հիմն արկեալ զտնկատունն վաղհանեցաւ։

—Հայկական գաւելի թիւն ի բաց ձգեցաք և գլատինացւոց համեմատ զրեցաք զփրկչին մերոյ ընդ մերոյս։[39]

—Աստանօր եղև տպագրութիւն աստուածաշունչ գրոց ի լատինացւոց անատեալ և համաբարբառով, գլխարկեալ, գեղեցիկ յօրինուածով ի ձեռն Ոսկան վարդապետին Երևանցւոյ։[41]

	ի Փրկիս-տոսէ		Հայոց	
	ՌՈԿԸ		ՌՃԺԷ	
	ՌՈԿԹ		ՌՃԺԸ	
	ՌՈՀ		ՌՃԺԹ	
	ՌՈՀԱ		ՌՃԻ	
	ՌՈՀԲ		ՌՃԻԱ	
	ՌՈՀԳ		ՌՃԻԲ	
	ՌՈՀԴ		ՌՃԻԳ	
	ՌՈՀԵ		ՌՃԻԴ	
	ՌՈՀԶ		ՌՃԻԵ	
	ՌՈՀԷ		ՌՃԻԶ	
	ՌՈՀԸ		ՌՃԻԷ	—Սաստիկ շարժ եղև Երևան և ԸՌ (8000) մարդ մեռան և Հաւուց թառու եկեղեցիքն և Գեղարդին և Գետարգելին փլան և Տրդատայ թախտն ի Գառնի ի հիմնէ կործանեցաւ և այլ բազում եկեղ[ե]ցիք և ապարանք յատակեցան։43
—Յակոբ կաթողիկոսն դիմեաց ի մեծն Հռոմ, գնաց ի Ստամպօլ և անդ վաղճանեցաւ, և մնաց յաթոռն անտէրունչ ամս Բ (2)։ Յետ որոյ նստաւ Եղիազար կաթողիկոս Կլայեցի, յաթոռ սուրբ Էջմիածնի։42	ՌՈՀԹ		ՌՃԻԸ	
	ՌՈՁ		ՌՃԻԹ	
	ՌՈՁԱ	Տէր Եղիազար Ժ	ՌՃԼ	
	ՌՈՁԲ		ՌՃԼԱ	—Նահատակեցաւ ի Կոստանդնուպօլիս Գրիգոր ոմն քրիստոնեայ ի քաղաքէն Թէոդուպօլսէ ի գեղջէ Կանայ ի մայիսի ԺԹ (10) յաւուր ուրբաթի։44
	ՌՈՁԳ		ՌՃԼԲ	
	ՌՈՁԴ		ՌՃԼԳ	
	ՌՈՁԵ		ՌՃԼԴ	
	ՌՈՁԶ		ՌՃԼԵ	
—Դարձեալ յետ առին զմեծ քաղաքն Պտում ազգն Ընկրուզաց։45	ՌՈՁԷ		ՌՃԼԶ	—Սուլթան Մէհէմէտն յաղթահարեալ ի ֆռանկաց թագաւորէն ընկեցաւ։ Եւ եդին զեղբայր նորա, զՍուլէյմանն թագաւոր։46
	ՌՈՁԸ		ՌՃԼԷ	
	ՌՈՁԹ		ՌՃԼԸ	—Վաղճանեցաւ Լեհացի Ստեփաննոս վարդապետն, որ բազում գրեանս թարգմանեաց ֆռանկաց ի հայս։48
	ՌՈՂ		ՌՃԼԹ	
—Վաղճանեցաւ Եղիազար հոգևոր տէրն ի սուրբ Էջմիածին և եդաւ մարմին նորա ի սուրբ Գայիանէն։47	ՌՈՂԱ	Տէր Նահապետ ԺԱ	ՌՃԽ	—Նահապետ վարդապետն Ուռհայեցի նստաւ կաթողիկոս ի սուրբ Էջմիածին։
	ՌՈՂԲ		ՌՃԽԱ	
—Մեռաւ շահ Սուլէյմանն և թագաւորեաց որդի նորա շահ Հիւսէինն։49	ՌՈՂԳ		ՌՃԽԲ	
	ՌՈՂԴ		ՌՃԽԳ	
	ՌՈՂԵ		ՌՃԽԴ	

Ի գրքույ. տուէ		Հայոց	
ՌՈՂԶ		ՌՃԽԵ	—Սանփանոս վարդապետն Զուղայեցի նստաւ կաթողիկոս ի սուրբ էջմիածին։[50]
ՌՈՂԷ		ՌՃԽԶ	
ՌՈՂԸ		ՌՃԽԷ	
ՌՈՂԹ		ՌՃԽԸ	—Այս ամ ես տրեղակն խաւարեցաւ։
ՌԶ		ՌՃԽԹ	
ՌԶԱ		ՌՃՄ	
ՌԶԲ		ՌՃՄԱ	—Վաղճանեցաւ մեծ վարդապետն Իսահակ, որ մականուամբ Արդար Սահակ յորջորջիւր ի վանս Բաղուանայ սուրբ Գրիգորի, որ բոռ հասարակաց Ուշքիլիսէ կոչի, և եղաւ անա ի սապանի։[52]
ՌԶԳ		ՌՃՄԲ	
ՌԶԴ		ՌՃՄԳ	
ՌԶԵ		ՌՃՄԴ	
ՌԶԶ	Տէր Աղէքսանդրը	ՌՃՄԵ	—Աղէքսանդր վարդապետն Զուղայեցի նստաւ կաթողիկոս ի սուրբ էջմիածին։
ՌԶԷ		ՌՃՄԶ	
ՌԶԸ		ՌՃՄԷ	—Վաղճանեցաւ Նահապետ հոդեոր տէրն ի Շատիկու անապատն և բերաւ մարմին նորա ի սուրբ էջմիածին և եղաւ ի սուրբ Շողակաթն։[55]
ՌԶԹ		ՌՃՄԸ	
ՌԶԺ		ՌՃՄԹ	
ՌԶԺԱ		ՌՃԿ	
ՌԶԺԲ		ՌՃԿԱ	—Աղէքսանդր հոդեոր տէրն դնաց Իսպահան և դարձեալ եկն ի սուրբ էջմիածին և վաղճանեցաւ։
ՌԶԺԳ		ՌՃԿԲ	
ՌԶԺԴ		ՌՃԿԳ	
ՌԶԺԵ	Տէր Աստուածատուր	ՌՃԿԴ	—Աստուածատուր վարդապետն Համատանցի նստաւ կաթողիկոս ի սուրբ էջմիածին։
ՌԶԺԶ		ՌՃԿԵ	
ՌԶԺԷ		ՌՃԿԶ	—Վաղճանեցաւ Սարգիս վարդապետն Կաֆայեցի և եղաւ մարմին նորին ի սուրբ աթոռն առաքելոյն Թադէոսի։
ՌԶԺԸ		ՌՃԿԷ	
ՌԶԺԹ		ՌՃԿԸ	
ՌԶԻ		ՌՃԿԹ	
ՌԶԻԱ		ՌՃՀ	—Սաստիկ շարժ եղև ի քաղաքն Թարվէզ և բովանտակն ամենեքին կործանեցաւ հազիւ նրշմարանք շինուածոցն մնացի։
ՌԶԻԲ		ՌՃՀԱ	
ՌԶԻԳ		ՌՃՀԲ	

—Աբգրուամայ շէյքոն Իբրահիմ փաշայն ԾՌ (ՃՕՕՕՕ) արամբ եկն ի վերայ Պայազիտու. բերդին և [յ]ոլով ինչաս հասոյց երկրին։

—Վաղճանեցաւ Կոփեցի Սարդիս վարդապետն։[51]

—Սկիզբն արար շինուածոցն Մակուայ բերդին Մահմատխանն սուլթանն, հրամանաւ շահ Հիւսէին թագաւորին և յոգնականութեամբ Երևանայ Ասլրլմահմատ խանին։[54]

—Այս ամ ես եկն Արդուբուամայ փաշայն եկն ի վերայ Պայազիտու և բաղում ինչաս հասոյց բովանդակ նահանդացն, և յոլով աւուրս նստեալ ի վերայ բերդին ոչ կարաց առնուլ այլ յաղթահարեալ յետս դարձաւ յամօթալի։[56]

—Առաւ ի պարսից Մակուայ բերդն Մարք։[57]

Ի Հրբէ-ական		Հայոց
ՌԶԻԳ		ՌՃՀԳ
ՌԶԻԵ		ՌՃՀԴ
ՌԶԻԶ		ՌՃՀԵ
ՌԶԻԷ		ՌՃՀԶ
ՌԶԻԸ		ՌՃՀԷ
ՌԶԻԹ		ՌՃՀԸ
ՌԶԼ		ՌՃՀԹ
ՌԶԼԱ		ՌՃԶ
ՌԶԼԲ		ՌՃԶԱ
ՌԶԼԳ		ՌՃԶԲ
ՌԶԼԴ		ՌՃԶԳ
ՌԶԼԵ		ՌՃԶԴ
ՌԶԼԶ		ՌՃԶԵ
ՌԶԼԷ		ՌՃԶԶ
ՌԶԼԸ		ՌՃԶԷ
ՌԶԼԹ		ՌՃԶԸ
ՌԶԽ		ՌՃԶԹ
ՌԶԽԱ		ՌՃՂ
ՌԶԽԲ		ՌՃՂԱ
ՌԶԽԳ		ՌՃՂԲ
ՌԶԽԴ		ՌՃՂԳ
ՌԶԽԵ		ՌՃՂԴ
ՌԶԽԶ		ՌՃՂԵ
ՌԶԽԷ		ՌՃՂԶ
ՌԶԽԸ		ՌՃՂԷ
ՌԶԽԹ		ՌՃՂԸ
ՌԶՄ		ՌՃՂԹ
ՌԶՄԱ		ՌՄ

—Վաղճանեցաւ Աստուածատուր հողևոր աէրն և եղաւ մարմին նորին ի սուրբ Հռիրսիմէն։

—Վաղճանեցաւ Կարապետ հոդեոր աէրն և եղաւ մարմին նորին ևս ի սուրբ Հռիրսիմէն։

—Վաղճանեցաւ Աբրահամ կաթողիկոսն և եղաւ մարմին նորայ ի սուրբն Գայիանէ։

—Առաւ ի Պարսից աղգն Օսմանոց զմեծ քաղաքն Թարվէզ։

—Օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց Կարապետ վարդապետն Գաղատացի։[58]

—Տէր Աբրահամ աստուածաբան վարդապետն օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց։[59] Երկիրն յետ առին Պարսիկք զքաղաքն Թարվէզ։[60]

—Օծաւ կաթողիկոս երկրորդ Աբրահամ վարդապետն Թաքրտաղցի։[61]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդգծված բառերը բնագրում գրված են կարմիր թանաքով։

2. Ինչպես խորագրում, այնպես էլ այստեղ, ժամանակագրության հեղինակը հայկական թվականի և մեր թվականության հարաբերությունն ընդունել է ոչ թե 551 : 1, ինչպես ընդունված է, այլ 553 : 1, այդ պատճառով էլ Կոստանդինոպոլսի գրավումը հաշված է 1455 թ.։

3. Հեղինակն ըստ երևույթին նկատի ունի օսմանական սուլթան Մուհամմեդ II-ի կողմից Տրապիզոնի կայսրության գրավումը։

4. Պաբոնլույս կամ Լուսպարոն, Կաֆայեցի, 18 տարեկան պատանի, հավատը չուրանալու համար նահատակվեց 1567 թ. մայիսի 15-ին, հինգշաբթի, Կաֆայում։ Նահատակության պատմությունն արձակ և չափածո գրել է Վրթանես վարդապետ Կաֆայեցին։ Մի փոքրիկ բանաստեղծություն էլ ունի վեցչինիս աշակերտ Թումա Կաֆայեցին։ (Տես «Հայոց նոր վկաները», աշխատությամբ Հ. Մանդինյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903 թ., էջ 386—394, 396—401, 401—408, 409—411)։

5. Օսմանյան թուրքերը Մուհամմեդ II-ի ժամանակ՝ 1475 թ. ճենովացիներից գրավեցին Կաֆան, այնուհետև ողջ Ղրիմը։ Կաֆայի գրավման մասին հաղորդում է նաև Ամբրոսիո Կոնտարինի ճանապարհորդը, որն այդ լուրը ստացել է 1475 թ. հուլիսի 27-ին։ («Ուղեդրություններ», հ. Ա, էջ 247)։

Այդ մասին, 1475—1476 թ. թ. ընդօրինակած մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Ի թվին Հայոց ՋԻԴ (=1475) յորում գրեցաւ սուրբ աւետարանս, առին զԿաֆան տաճիկն և արարին բաղում գեղութիւնս և աւերումն, և եղև յոյժ տրտմութիւն և սուգ քրիստոնեից...» (Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունի «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», 1929, Երուսաղէմ, էջ 475)։

6. Հմմտ. «Ժամանակագրական պատմութիւնս ս. Երուսաղէմի», հ. Ա, աշխատասիրությամբ Աստվածատուր Տեր-Հովհաննիսյանց, Երուսաղէմ, 1890, գլուխ ԼԲ։ Խոսքը վերաբերում է 1476 թ. Երուսաղեմի սրբավայրերից մեկին, որը հայկական եկեղեցու ազդեցությունից անցնում է վրացականին։

Այդ մասին 1476 թ. ընդօրինակած ավետարանի հիշատակարանում կարդում ենք.

«... և ի միւսում ամի ՋԻԵ (1476) թվին առին վրացիքն զԴողդոթայ ի Հայոց և ի նոյն ամի հայերն գնացին ի սուլթանն ու առեալ հրաման եկին և շինեցին զնոր Դողդոթայի սանդուխն և ուրախացան»։ (Մկրտիչ եպիս. Աղաւնունի «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», էջ 475)։

7. Պարսկաստանի Սեֆյան դինաստիայի սկիզբը բնավ 1491 թ. չի համարվում։ Դուցե հեղինակը նկատի ունի Ակ-կոյունլու Յաղուրի թունավորումից (1490 թ.) հետո տեղի ունեցած գահակալական կռիվները, որոնց ժամանակ էլ հանգես եկան Սեֆյանները։

8. Շահ Իսմայիլ՝ Սեֆյան դինաստիայի հիմնադիրը, ծնվել է 1480-ական թ. թ.։ Նա իր նվաճումներն սկսեց 1499 թ.։ Թագավորեց 1501—1524 թ. թ.։

9. Ամերիկայի գյուտը Ք. Կոլոմբոսի կողմից տեղի է ունեցել 1492 թ. հոկտեմբերի 12-ին։

10. Եթե հեղինակը նկատի ունի շահ Իսմայիլի և Ակ-Կոյունլու Ալվանդի զորքերի ճակատամարտը Շարուրում, ապա այն տեղի է ունեցել 1501 թ.։

11. Տես էջ 163, ծանոթ. 4։

12. Բնագրի «ամս ԻԵ» թերևս գրչագրական սխալ է և պետք է լինի «ամս ԽԵ»։

13. Շահ Թահմազը թագավորել է 1524—1576 թ. թ.։

14. Հեղինակը նկատի ունի օսմանյան թուրքերի և հունգարների պատերազմը, որի ժամանակ թուրքերը 1526 թ. գրավեցին Բելգրադը։ Իսկ նույն թվին Մոհաչի ճակատամարտում չարգելով

Հունգարներին հասան Վիեննայի դարբասներին (1529 թ.)։ Բնագրի «զՊուտումն» Հունգարիայի մայրաքաղաք Օֆենն է (Բուդա)։

15. Հեղինակը նկատի ունի թուրք-պարսկական երկրորդ պատերազմը։ Հմմտ. Հով. Արճիշեցու հիշատակարանը («Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 19—30)։

16. Հմմտ. X ժամանակագրություն, էջ 157։

17. Հմմտ. «Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն», հ. Ա, էջ 10—11։

18. Հեղինակը նկատի ունի թուրք-պարսկական հերթական պատերազմը, որի ժամանակ նախահարձակը Պարսկաստանն էր։ Պարսկական 1551 թ. հարձակմանը (տես Թադեոս վարդապետ Սերաստացու հիշատակարանը, Զամչյան, հատոր Դ, էջ 514—515) Սուլեյմանը պատասխանեց 1554 թ. Պարսկաստան արշավելով։

19. Սելիմ II-ը (1566—1574 թ. թ.) Կիպրոսը գրավել է 1571 թ.։

20. Հմմտ. էջ 302, «Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հ. Ա, էջ 11։

21. Հմմտ. «Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն», հ. Ա, էջ 13։

22. Շահ Արաս I-ը թագավորել է 1587—1628 թ. թ., հետևապես ոչ թե 50 տարի, այլ 40։

24. Լատինական տոմարի հորինման հանգամանքները տես Օրմանյանի մոտ («Ազգապատում», էջ 2274—2276)։

25. Թուրք-պարսկական հերթական կռիվները տևեցին 11 տարի՝ 1578—1590 թ. թ.։ Հմմտ. «Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն», հ. Ա, էջ 13։

26. Շիրվանի օսմանական բանակի հրամանատար Օսման Յուզդեմիրը թավրիզը գրավել է 1585 թ.։

27. Հմմտ. «Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն», հ. Ա, էջ 13։ «Ա. վ. Դավրիժեցւոյ պատմութիւն», էջ 614։

28. Օրմանյանը Սրապիոն Ուռհայեցուն հաշվում է աթոռակից Դավիթ Դ. Վաղարշապատեցուն։ Սրապիոնի օծումը տեղի է ունեցել 1603 թ. օգոստոսի 14-ին («Ազգապատում», էջ 2291—2293), իսկ մահը՝ 1606 թ. ապրիլի 23-ին (նույն տեղ, էջ 2295)։

29. Հմմտ. «Ա. Դավրիժեցւոյ պատմութիւն», էջ 210—213։ Ըստ Դավրիժեցու 15 քար։

30. Համաձայն Դավրիժեցու՝ Անգրեասին կախաղան բարձրացրին 1617 թ. նոյեմբերի 18-ին։ Մանրամասնությունները տես անդ, էջ 354—363։

31. Սույն հատվածը բնագրում գրված է հայոց ՌՁՁ (=1637) թվականի դիմաց, սակայն հատուկ նշանով ցույց է տրված, որ այն պետք է դնել հայոց ՌՁԴ (1635) թվականի դիմաց։ Տես վերևում, էջ 199, ծանոթ. 36, էջ 250, ծանոթ. 17։

32. Սույն հատվածը բնագրում գրված է 48բ էջի աջ կողմի ամենավերևի մասում և միաժամանակ հատուկ նշանով ցույց է տրված, որ այն պետք է գնել հայոց ՌՁԸ (1639) թվականի դիմաց։

33. Խոսքը վերաբերում է Մուրադ IV-ի և շահ Սեֆու միջև կնքված դաշինքին։

34. Քաշան քաղաք, Սպահանից հյուսիս-արևմուտք։ Շահ Սեֆի I-ը մահացավ այստեղ 1642 թ., որին հաջորդեց շահ Աբաս II-ը, 1642—1667 թ. թ.։

35. Խոսքը վերաբերում է վենետիկցիների և օսմանյան թուրքերի միջև 1645—1669 թ. թ. տեղի ունեցած կռիվներին։ Հմմտ. XV ժամանակագրություն, էջ 235, ծանոթ. 128։

36. Մուհամմեդ IV-ը թագավորել է 1648—1687 թ. թ.։

37. «Վտաւան» տարածության չափ։ Օգտագործել է նաև Խորենացին (II, Իե) «Նոր բառագիրք հայկազեան լեզուի» հեղինակները նույնացնում են ստադիոնի Σταδίον հետ=մեկ ասպարեզ (հ. Բ. էջ 833)։

38. Սույն վկայությունը հաստատում է Զաքարիա Ագուլեցին, որը 1668 թ. հունիսին այցելել է Տաթևի անապատը և օրագրում հիշատակել, որ «այս անապատս դեռևս կիսակատար էր» («Օրագրությունը», էջ 75—76)։

39. Սույն հատվածի վերջին բառը չկարողացանք ընթեռնել, միայն պարզ երևում է առաջին «հ» և վերջին՝ «րս» տառերը. գուցե «հորս»։ Սակայն հատվածից հետո, տեղեկությունները հիշատակվում են հայոց և այժմ մեր կողմից գործածվող տարեթվերի ոչ թե 553 : 1 հարաբերությամբ, ինչպես մինչև այդ էր, այլ 551 : 1 հարաբերությամբ։

40. Բնագրում սույն հատվածը գրված է հայոց ՌԺԺԳ (=1665) թվականի ներքո, սակայն հատուկ նշանով ցույց է տրված, որ այն պետք է գնել հայոց ՌԺԺԸ (1666) թվականի դիմաց։ Աշրաֆ քաղաք, Աստրաբատ ծոցից 7 կլ. հարավ, Աստրաբատ-Սարի ճանապարհի վրա,. 4,5

կլմ. Տեղի դեմի գետաբերանից հեռու, որ կառուցել է շահ Արաս I-ը (Бартольд" Историко-географический обзор Ирана", стр. 161):

41. Հեղինակն այստեղ նկատի ունի Ոսկան վարդապետի կողմից Աստվածաշնչի հրատարակման աշխատանքները, որոնք իրոք սկսվեցին 1666 թ. և ավարտվեցին 1668 թ.։

42. Հակոբ Ջուղայեցին մահացել է 1680 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում (տես վերևում, էջ 314, ծանոթ. 32)։ Իսկ Եղիազար Այնթափեցին Էջմիածնի կաթողիկոս դառնում է 1682 թ.։

43. Երկրաշարժի տարեթիվը մի տարով շուտ է նշված, այն տեղի է ունեցել 1679 թ. հունիսի 4-ին (տես վերևում, էջ 311, XXVII ժամանակագրական մանր հատվածներ, ծանոթ. 59)։

44. Սրա մասին հիշում է միայն Չամչյանը («Պատմութիւն Հայոց», հ. Գ, էջ 656)։

45. Խոսքը վերաբերում է ավստրո-թուրքական պատերազմին, որը սկսվեց 1683 թ.։ Թուրքերը 1682 թ. միջամտելով հունգարների ներքին գործերին, ձգտում էին հունգարական գահին նստեցնել իրենց թեկնածուին։ Թուրքերի դեմ մղվող այս պատերազմում Ավստրիան դաշինք կնքեց Բավարիայի կյուրֆյուրստի և Շվեդիայի թագավորի հետ։ Լեհաստանը նույնպես միացավ Ավստրիային։ Թուրքերը Կարա-Մուստաֆայի հրամանատարությամբ 1683 թ. հասան Վիեննա և պաշարեցին այն։ Պատերազմի ելքը որոշելու էր Ցան Սոբեսկու (Լեհաստան) մասնակցությունը։ Շուտով Ցան Սոբեսկին անսպասելի երևաց Վիեննան պաշարող թուրքերի թիկունքում և ջախջախեց նրանց 1683 թ. սեպտեմբերի 13-ին։ Հունգարիայի և նրա մայրաքաղաքի Օֆենի (Բուդա) ազատագրումը տեղի ունեցավ 1686 թ.։ Հեղինակը նկատի ունի այս վերջին դեպքերը։

45. Սուլթյման II-ը թագավորել է 1687—1691 թ. թ.։

47. Հմմտ. «Ազգապատում», էջ 2660։

48. Չամչյանը սրա մասին գրում է. «Եւ ինքն (Ստեփաննոսը— Վ. Հ.) լեալ իբր ութսուն ամաց՝ վախճանեցաւ ի թուականութեանս Հայոց ՌՃԽԸ. փոքր մի յառաջ կամ յետոյ։ («Պատմութիւն Հայոց», հ. Գ. էջ 620)։

49. Պարսկաստանի շահ Հյուսեյինը թագավորել է 1694—1722 թ .թ.։

50. Հմմտ. էջ 285, 287, ծանոթ. 10։

52. Հմմտ. էջ 304, 311։

53. Հմմտ. էջ 311։

54. Հմմտ. էջ 304։

55. Նահապետ Եգեսացին մահացել է 1705 թ. հունիսի 13-ին։ Հմմտ. XXII ժամանակագրություն, էջ 304։ Ըստ երևույթին սույն վկայության մեջ տեղ է գտել «Ե» և «Է» սառերի սովորական շփոթումը։ Շատիկը գտնվում է Ճակատը գավառում (տես և հմմտ. Ասողիկ, էջ 188)։ Այժմյան Կողբի և Սուրմաղիի շրջանում։ Ալիշանն այդ առթիվ գրում է. «...Շատիկ սահմանակից էր Շիրակայ կամ ի սահմանս Երասխաձորոյ. ուրանօր կշիռ ի Հս. Սուրմառոյ և հազիւ իբր փարսախաւ հեռի, և մերձագոյն ի Խաչ-տաղ՝ նշանակի բարձրաւանդակ մի Դեատիկ-թէփէ անուն, որ մերձաւորութեամբ կոչմանն և դրիցն թուեցուցանէ ե զնոյնութիւն Շատկայ», («Այրարատ», էջ 124)։ Սակայն խոսքը այս Շատիկի մասին չէ։ Վայոց ձորում, Ոստին գյուղի դիմաց և Հասանքենտ գյուղից արևելք մի բարձրադիր սարահարթի վրա գտնվում է Շատի վանքը կամ Շ.ատիկ անապատը (տես Ալիշան «Սիսական», էջ 159)։ Խոսքը հավանաբար այս Շատիկի մասին է, որովհետև անապատն այստեղ է գտնվել։

56. Հմմտ. XXII ժամանակագրություն, էջ 304։

57. Հմմտ. XXII ժամանակագրություն, էջ 305։ Սույն հատվածի դրության ձևը մի փոքր այլ է։

58. Բնագրում սույն հատվածը դրված է Հայոց ՌՃՀԶ թվականի դիմաց և հատուկ նշանով ցույց տրված, որ այն պետք է լինի Հայոց ՌՃՀԵ թվականի դիմաց։ Խոսքը վերաբերում է Կարապետ Բ. Ուլնեցուն, 1726—1729 թ. թ.։

59. Խոսքը վերաբերում է Աբրահամ Բ Խոշաբեցուն 1730—1734 թ. թ.։

60. Թավրիզի հետ գրավման վկայությունը բնագրում դրված է Հայոց ՌՃԶԲ թվականի դիմաց, սակայն հատուկ նշանով ցույց է տրված, որ այն պետք է լինի Հայոց ՌՃՀԹ թվականի դիմաց։

61. Սույն վկայությունը բնագրում դրված է Հայոց ՌՃԶԴ թվականի դիմաց, սակայն հատուկ նշանով ցույց է տրված, որ այն պետք է լինի Հայոց ՌՃԶԴ թվականի դիմաց։ Խոսքը վերաբերում է Աբրահամ Բ Կրետացուն (1734—1737 թ. թ.)։